**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1-4**

ք.Երևան «12 » « 12 » 2019թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, (գործելով Հայաստանի Հանրապետության անունից), ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «Ցիկլոիդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արման Երիցյանի, (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 25.03.2019թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1-4 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.9 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով, որ ՀՀ ԱՆ «Արմավիր» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկները 2019թ. հոկտեմբերի 15-ից անցել են սննդի հատկացման նոր համակարգի՝ պատրաստի սննդի ձեռքբերման ծառայության, ուստի անհրաժեշտություն է առաջացել նվազեցնել մատակարարվող սննդամթերքի քանակները: Հաշվի առնելով նշվածը, Գնորդի նախաձեռնությամբ կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված՝ սննդամթերքի քանակները նվազեցնել, մասնավորապես՝

1) 16000 կգ «խտացրած կաթ» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 6047 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 5526958 (հինգ միլիոն հինգ հարյուր քսանվեց հազար ինը հարյուր հիսունութ) ՀՀ դրամ,

Հաշվի առնելով այն համգամանքը, որ նվազեցվող քանակների չափով վերացել է «խտացրած կաթ» ապրանքատեսակի գնման պահանջը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարել ֆինանսական հատկացումների նվազեցում և այդ գումարի չափով նվազեցնել Պայմանագրի գինը:

1.2 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պայմանագրի գինը՝ կազմում 9097043 (ինը միլիոն իննսունյոթ հազար քառասուներեք) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:

1.3 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 8-րդ, չափաբաժնի աղյուսակը հաստատել նոր խմբագրությամբ՝ առանց տեխնիկական բնութագրի սյունակի (որը մնում է ամփոփոխ):

1.4 Պայմանագրի N2 հավելվածը՝ «վճարման ժամանակացույց»-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1-4 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և N1, N2 հավելվածները կազմված են 4 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | Ցիկլոիդ ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | Հասցե՝ Ք.Երևան, Նորք Մարաշ թաղամաս, Նորքի 1 նրբ. 5 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | <<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ 900011175016 | 16048550841200 |
| ՀՎՀՀ 02204739 | 00444541 |
| ՔԿ ծառայություն՝ Ա.Ղազարյան | Տնօրեն Ա. Երիցյան |
| ------------------------------------------ /ստորագրություն/ Կ.Տ. | ------------------------------------------ /ստորագրություն/ Կ.Տ. |

*Հավելված N 1*
*« 12 » « 12 » 2019 թ. կնքված*
*N 1 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1-4 ծածկագրով պայմանագրի*

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողը և ծագման երկիրը | չափման միավորը | միավորի գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 8 | 15511600/2 | խտացրած կաթ | ՌԴ, «Բելգորոդի մոլոչնի կոմբինատ» ԲԲԸ | կգ | 914 | 9097043 | 9953 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ՝ համաձայն բաշխման ցուցակի | 9953 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 15.12.2019թ. |

*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն՝ Ա.Ղազարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
Ցիկլոիդ ՍՊԸ
Հասցե՝ Ք.Երևան, Նորք Մարաշ թաղամաս, Նորքի 1 նրբ. 5
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ
16048550841200
00444541

Տնօրեն՝ Ա. Երիցյան
/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված N 2*
*« 12 » « 12 » 2019 թ. կնքված*
*N 1 Համաձայնագրի*
*N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1-4 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին` ըստ եռամսյակների, այդ թվում | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
| 8 | 15511600/2 | խտացրած կաթ | - | 4387200 | 8774400 | 9097043 | 9097043 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայություն Ա.Ղազարյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
Ցիկլոիդ ՍՊԸ
Հասցե` Ք.Երևան, Նորք Մարաշ թաղամաս,
Նորքի 1 նրբ. 5
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ
16048550841200
00444541
Տնօրեն Ա. Երիցյան
/ստորագրություն/
Կ.Տ.